

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 25.08.2021թ. թիվ 2113284483 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 29 >> 09 2021թ. 7-13- 14719

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Էդուարդ Մաթևոսյանի ՄԴ/79914-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Լազոյի փողոցի 32-րդ տան բնակիչ Էդուարդ Մաթևոսյանը դիմումում խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 25.08.2021թ. թիվ 2113284483 որոշումը, նշելով, որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 25.08.2021թ. թիվ 2113284483 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 1.18 գծանշումը ցույց է տալիս խաչմերուկում երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ ըստ գոտիների: Կիրառվում է ինքնուրույն կամ 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով» և 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով» նշանների հետ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 25.08.2021թ. թիվ 2113284483 որոշման հիմքում դրված տեսանյութը հստակ ապացուցում է, որ 08.08.2021թ. ժամը 10:26-ին <<OPEL>> մակնիշի 36TS645 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը Երևան քաղաքի Իսակով – Բաբաջանյան - Գետափնյա փողոցների խաչմերուկի հատվածում 1.18 գծանշմամբ երթևեկությունը միայն հետադարձ թույլատրող երթևեկելի գոտուց երթևեկել է դեպի ձախ:

Հարկ է նշել, որ 1.18՝ գծանշման պահանջը խախտելու համար արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու կարգ սահմանված չէ (դիտավորություն, անզգուշություն և այլն):

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 25.08.2021թ. թիվ 2113284483 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Էդուարդ Մաթևոսյանին:



Ե. Կարապետյան

Կատարող Կ. Գևորգյան
Հեռ. 060838402